

գեղեցկություն, հանդիսարան մըն է ֆաղցր հրաշքներու, հազարէ աւելի տարիներու դիմացող: Խորաններու առատ ոսկին, կանթեղներու արծաթը, աշտանակներու, խաչերու, սպասներու, գաւազաններու գեղակաւոյց հասակները ոսկիէն եւ ներմակ մետաղէն, ճշմարիտ գանձարանի մը երեւոյթը կ'ընծայեն

այս խորհրդաւոր սրբավայրին»: այս խորհրդաւոր սրբավայրին»:

Այցելութիւն մը այս Սրբավայրին, քաւ է հոգիի աչքերով տեսնելու «Լոյսն անտես իմանալի...» եւ վայրերը Քրիստոսակոխ... ուր հաւատացեալ մարդը ինքզինք աւելի մօտ կը զգայ Աստուծոյ, երբ կը փախէ հաւատքի ճամբէն:

ՆԱՀԱՊԵՏ ՄԵԼՔՈՆԵԱՆ

Թանկարժէք նուէրը

Գիշեր էր: Թանձր մթութեանը հիսուած ամպերն այնպէս էին քողարկել լուսինը, կարծես մի պահ փորձում էին այն թաքցնել դիտողի աչքից: Այդ գիշեր Կ. քաղաքի համայնքներից մէկում լուսնի կաթնագոյն լոյսին էին փոխարինել խրախճանքի լոյսերը, որոնք դեռևս շարունակում էին պայքարել համատարած խաւարի դէմ: Թէև ուրախ երեկոն գրեթէ ւարտուած էր, սակայն մի խումբ տղաներ յամենում էին լքել միջավայրը: Իւրաքանչիւրի մտքում թևածում էր հետաքրքիր մի հարց, թէ ի՞նչ նուէրներ էին ստանալու հարազատներից: Քանի որ ընդունուած կարգի համաձայն ծնողները շրջանաւարտ գաւակներին տալիս էին ճոխ նուէրներ՝ ւստովնեքնայ, շրջագայութեան տոմս, դրամագլուխ, իսկ տղաներն էլ միանգամայն վստահ էին, որ ստանալու էին նմանատիպ նուէրներ, բոլորի մէջ հետաքրքրասիրութիւնը փոխուել էր մրցակցութեան, որի մէջ յաղթելը կախուած էր ոչ թէ իրենց ուժերից, այլ՝ ծնողների ճաշակից կամ ցանկութիւնից: Տղաներից մէկն արդէն պարծենում էր նոր ստացած մեքենայով, միւսը՝ խոշոր դրամագլխի ակնկալիքով: Կային նաև այնպիսիք՝ ովքեր անցնելով պարկեշտութեան թոյլատրելի սահմանը, վստահեցնում էին ներկաներին, թէ պատրաստ են մերժելու փոքր կամ էժանագին որևէ նուէր, եթէ նոյնիսկ մատուցուէր իրենց ծնողների ձեռքով: Ներկայ էր նաև Ստեփանը, որը նոյնպէս շրջանաւարտ էր և ակնկալում էր ստանալ ոչ պակաս մի պարգև: Ապրելով նման միջավայրում, ունենալով նման ընկերներ՝ նա կամայ թէ ակամայ, իր անձը նոյնացրել էր նրանց հետ և իր համար մեծ ամօթ կը լինէր ստանալ այնպիսի նուէր, որը գիշեր ընկերների ստացածին: Նրա մտքերը շարունակ փոխում էին շարժման կորագիծը և թեքում մերթ դէպի այս և մերթ այն ընկերոջ նախընտրութիւնը: Երբ արդէն կէսգիշեր էր, բոլորը նկատել էին, որ իրենց խօսակցութիւնը երկար ժամանակ նեղ շրջանակի մէջ է առել միևնոյն առանցքը, որոշեցին հրաժեշտ տալ իրար՝ յաջորդ օրն արդիւնքներն ամփոփելու ոչ բացայայտ մտադրութեամբ:

Տուն գնալու ճանապարհին Ստեփանի սիրտը յանկարծ խոցեց մի տղ-
հաձ կասկած. չլինի՞ թէ հայրը հրաժարուի իր տրամադրութեան տակ դնել
խոշոր դրամագլուխ կամ մեքենայ: Չէ՞ որ հայրը բարոյական և քրիստոնէա-
կան խրատներով Ստեփանին բազմիցս էր յորդորել գերծ մնալ աւելորդ գա-
թակցութիւններից և բաւարարուել ունեցածով: Նոյն պահին սակայն, Ստեփա-
նի մտավախութիւնները փարատուեցին երբ յիշեց, թէ վերջին ժամանակնե-
րում հայրն ինչպիսի սիրով էր հաշուի նստում իր հետ և հետևաբար որքան
պատրաստակամ կը գտնուէր տրամադրելու իր լաւագոյնը: Ուրեմն Ստեփանն
անկասկած վայելելու էր բաղձալի վայրկեանի բերկրանքը: Այս մտորումներից
նա սթափուեց միայն այն ժամանակ, երբ մատը մեքենայաբար սեղմեց դրան
զանգի կոճակը: Երբ հայրը ժպտաղէմ բաց արեց դուռը և ներս թողեց որդուն,
Ստեփանը մէկ անգամ ևս համոզուեց, որ իր մտավախութիւններն անտեղի
էին: Քիչ անց մայրը դուրս եկաւ կողքի սենեակից՝ բերելով զարդարուած մի
փաթեթ և մեկնեց ամուսնուն:

- Սիրելի՛ Ստեփան, սրտանց շնորհաւորում ենք քեզ այս սպասուած օր-
ւայ առթիւ: Որպէս նուէր մեզանից ընդունիր այս փաթեթը: Բացի՛ր և ինքդ տես,
թէ ի՞նչ կայ ներսում,- ասաց հայրը՝ փաթեթը յանձնելով որդուն:

Յուզմունքից դողացող Ստեփանի ձեռքերում նուէրը քանիցս շուտ ու
մուտ եկաւ, ապա բացուեց: Փաթեթի մէջ, սակայն, փայլում էր մի խաչ: Մի քա-
նի վայրկեան անթարթ և սևեռուն աչքերով խաչը զննելով՝ Ստեփանն ասես
կշռադատում էր իրեն հասցուած, այսպէս կոչուած անպատուութեան
առկայութիւնը: Նրա գիտակցութիւնը այնպէս մթազնեց, որ ծնողների անկեղծ
ժպիտը նրան ծաղր թուաց: Վերցրեց խաչը, բարկութիւնից սեղմեց ափում և
մոլեգնած մի կողմ նետեց այն: Խաչը խուլ զնգոցով, կարծես, կտորուեց
յատակին, իսկ Ստեփանը դրան նայելու փոխարէն՝ չարացած հայեացքը
յառեց ծնողների վրայ: Խեղճ ծնողներն ամբարտաւան որդու նայուացքից
խուսափելու անօգուտ մղումով հայեացքները կտրեցին նրանից և նետուեցին
դէպի խաչը:

- Տեսնում եմ, թէ որքանով ես իւրացրել տարիների ուսումդ,- իրեն զսպե-
լով խօսեց հայրը,- որքանով ես յարգում բարոյական արժէքն ու սրբութիւնը,
որտեղ նոյնիսկ թաքնուած է քո ողորմելի երջանկութիւնը: Մօտեցի՛ր, խաչը
բարեբախտաբար չի կտորուել, այն բացուել է, որովհետև այն իրենից գեղեցիկ
և օրհնուած տուփ է ներկայացնում, այնինչ նուէրը՝ մեքենայի բանալին միջից
ընկել է յատակին: Սակայն խաչաձև տուփը գեղեցիկ լինելուց բացի իւրայա-
տուկ էր նաև նրանով, որ ինձ համար բացայայտեց որդուս արժանիքը:

Հայրական նախատինքի ամէն մի հնչիւն արծազանքեց Ստեփանի հո-
գում և ցնցեց նրան: Մնում էր հեկեկալով փլուել ծնկների վրայ: Միայն չգիտէր
նախ ներում պիտի հայցէր խաչն անարգելու, թէ՞ ծնողներին վիրաւորելու
համար:

ՍԱՄՈՒԷԼ ՍՐԿ. ՍԱՖԱՐԵԱՆ